ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳՀ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը, որը գտնվում է ք. Երևան,Վազգեն Սարգսյան 3/3 հասցեում, ստորև ներկայացնում է ԲՏԱՆ-ԳՀԾՁԲ-2019/5 ծածկագրով գնանշման հարցում ընթացակարգի արդյունքում 2019թ դեկտեմբերի 17-ին կնքված պայմանագրում 2019թ դեկտեմբերի 19-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ: Սահմանել ծառայությունների մատուցման նոր ժամկետ:

Փոփոխության նկարագրություն: Սահմանել ծառայությունների մատուցման նոր ժամկետ, սկիզբը հաշվելով 2019թ. դեկտեմբերի 20-ից սկսած՝ 20 օրացուցային օր :

Փոփոխության հիմնավորում: Կողմերի միջև 17.12.2019թ. թիվ ԲՏԱՆ-ԳՀԾՁԲ-2019/5 պետական գնման պայմանագրի 7.5 և 7.6 կետեր:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Անի Պետրոսյանին:

Հեռախոս՝ 010 59-00-47

Պատվիրատու՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ թիվ 1
17.12.2019թ. ԿՆՔՎԱԾ N ԲՏԱՆ-ԳՀԾՁԲ-2019/5 ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ք. Երևան **«19» դեկտեմբերի 2019թ.**

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Շ.Մեժլումյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա «Գնորդ», մի կողմից, և «Վեբէքս Թեքնոլոջիս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հ. Առաքելյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Վաճառող>> մյուս կողմից, միասին այսուհետև՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, և հիմք ընդունելով Կողմերի միջև 17.12.2019թ. ԿՆՔՎԱԾ N ԲՏԱՆ-ԳՀԾՁԲ-2019/5 պետական գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 և 7.6 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Կողմերը համաձայնվեցին.

1.1 Հաստատել Համաձայնագրի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը համաձայն հավելվածի (կցվում է):

1.2 Սահմանել ծառայությունների մատուցման նոր ժամկետ, սկիզբը հաշվելով 2019թ. դեկտեմբերի 20-ից սկսած՝ 20 օրացուցային օր:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագիրը կնքվում է հայերեն լեզվով երկու օրինակից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

3.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն	«Վեբէքս Թեքնոլոջիս» ՍՊԸ
Ք. Երևան Վ.Սարգսյան 3/3	ք. Երևան,Արտաշիսյան 44/5, բն. 28
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Ակբա Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011014710	Հ/Հ 220001921521000
ՀՎՀՀ 02565518	ՀՎՀՀ 02242681
գլխավոր քարտուղար	տնօրեն
Շ. Մեժլումյան	Հ. Առաքելյան
_____ /ստորագրություն/	_____ /ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հաստատված է
N ԲՏԱՆ-ԳՀԾՁԲ-2019/5 գնման պայմանագրի
«17» դեկտեմբերի 2019թ. կնքված
թիվ 1 Համաձայնագրով

ՀԱՎԵԼՎԱԾ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	48221400/2	Տեխնիկական բնութագիր****	դրամ	1,190,000	1	Ք. Երևան Վ.Սարգսյան3 /3	համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո 20 օրացուցային օր

**** *Տեխնիկական բնութագիրը կցվում է*

Չափաբաժնի համարը	Ծառայության անվանումը	Ձեռքբերվող ծառայության նկարագիրը
1	«ictstat.am կայքի նոր ֆունկցիոնալության ավելացման» ծառայություններ	**a. Պահանջների համառոտ նկարագրություն** Տեղեկատվական տեխնոլոգիաների (ՏՏ) ոլորտում առկա մարտահրավերների բացահայտման, ոլորտի հետագա զարգացման քաղաքականության մշակման, ինչպես նաև ոլորտում հետազոտությունների, վերլուծությունների ու կանխատեսումների իրականացման համար անհրաժեշտ է ունենալ ՏՏ ոլորտի ընկերություններից տվյալների և տեղեկությունների հավաքագրման և ստացված տվյալների մշակման հնարավորության ապահովում: **1.1. Առաջարկ** Ուսումնասիրելով գործող ictstat.am վեբ կայքը և վերլուծելով առկա հնարավորություններն ու թերությունները առաջարկվում է վերազինել գործող կայքը՝ նոր գործառույթների ավելացման միջոցով՝ ***Ադմինիստրատիվ բաժնում*** Համակարգում գրանցված Օգտատերերը (կազմակերպությունները) հնարավորություն կունենան ներկայացնել հայտեր «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի և օրենքից բխող 312-Ն կառավարության որոշման համաձայն՝ բարձր տեխնոլոգիաների ոլորտի սկսնակ տնտեսվարող սուբյեկտներին հարկային արտոնության տրամադրման համար: Նախարարության համապատասխան ստորաբաժնման աշխատակիցները հնարավորություն կունենան համակարգ մուտք գործելուց հետո փնտրել հաշվետվությունները (ըստ անվանումների, գործունեության ոլորտի, տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչների, հարկ վճարողի հաշվառման համարի (ՀՎՀՀ) գործունեության և դրանց հիման վրա կատարել վերլուծություններ:

2. Առաջարկվող ictstat.am վեբ-կայքի վերազինման նկարագրությունը

2.1. Գլխավոր էջ

Առաջարկվում է ***Գլխավոր*** էջին ունենալ հետևյալ տեղեկատվությունը հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով.

Գլխամասում

- Գրաֆիկական վահանակ (banner)՝ ըստ ցանկության
- Հիմնական մենյուում՝
  - Հավաստագիր

2.2. Բաժիններ

Տեղեկատվական մաս

ՏՀՏ Ռեգիստր

Բաժինը պետք է ունենա որոնողական համակարգ՝ ըստ գործունեության ոլորտի, տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչների, հարկ վճարողի հաշվառման համարի (ՀՎՀՀ) կամ նշված բանալի բառերի:

Կայքի ռեգիստր դաշտում կազմակերպությունը կարող է ավելացնել ընկերության նկարը կամ լոգոն՝ ներբեռնման միջոցով:

Փաստաթղթեր

Բաժնում պետք է առկա լինեն «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի համաձայն դիմումների Դիմում-հայտերը ձևերը լրացնելու և էլեկտրոնային ստորագրությամբ ներկայացնելու ցուցումներ, ինչպես նաև օրենքը և օրենքից բխող այլ իրավական ակտեր:

Հավաստագիր

Այս բաժինը նախատեսված է «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի համաձայն դիմումների ներկայացման համար, որտեղ կլինեն հետևյալ բաժինները՝

- Դիմում-հայտ
- Հավաստագիր ստանալու դիմում
- Գործունեության տեսակների վերաբերյալ հայտարարություն
- Հայտարարություն իրավաբանական անձի իրավական կարգավիճակի մասին
- Տեղեկանք աշխատողների թվի, պաշտոնների անվանումների և աշխատողների անունների, ազգանունների մասին
- Տեղեկանք կանոնադրական կապիտալում մասնակցության մասին
- Հայտարարություն հավաստագրվող անձի կանոնադրական կապիտալում օրենքով սահմանված անուղղակի մասնակցության մասին

Հետադարձ կապ

Բաժինը կունենա նաև առցանց եղանակով նախարարության հետ անմիջապես կայքի միջոցով կապ հաստատելու հնարավորություն:

Մուտք/Գրանցում

Որպես կազմակերպություն գրանցվելու համար անհրաժեշտ կլինի լրացնել նաև հետևյալ դաշտը՝ տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչ և հաստատել գրանցվելու ցանկությունը, որից հետո գրանցումն ավարտելու համար պահանջվող քայլերի հաջորդականություն պարունակող հաղորդագրություն կուղարկվի նշված էլ. փոստին:

Որպես նախարարության աշխատակից (հանձնաժողովի անդամ) գրանցվելու համար կառանձնացվի այլ պատուհան, որը հիմնական կայքից հասանելի չի լինի հանրության համար:

Ներկայումս նույնականացման համար օգտագործվող ծրագրային ապահովումը հասանելի է միայն Windows Օպերացիոն համակարգի համար, սակայն կայքը պետք է նախագծվի այնպես, որ հետագայում հնարավոր լինի օգտագործել նաև այլ Օպերացիոն համակարգերի և բջջային սարքերի միջոցով:

Ադմինիստրատիվ մաս

Գլխավոր

Այս բաժնում ընդգրկված կլինի ամփոփ տեղեկատվություն տվյալ Օգտատիրոջ գրանցած կազմակերպությունների և նրանց համար տեղադրված հաշվետվությունների մասին, ինչպես նաև կլինեն հղումներ դեպի առավել մանրամասն տեղեկություններ պարունակող էջեր (գրանցված կազմակերպությունների էջեր կամ հաշվետվությունների էջեր):

Կազմակերպություններ

Այս բաժնում հասանելի կլինի նաև տվյալ Օգտատիրոջ գրանցած կազմակերպությունների տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչները:

Արխիվ

Արխիվը նախատեսված է լինելու հեռացված կազմակերպությունների արխիվացման, վերջիններիս տվյալների պահմանման համար:

Հեռացնել կազմակերպություն

Օգտատերերը հնարավորություն կունենան այս բաժնի միջոցով հեռացնել գրանցած կազմակերպությունները: Հեռացնելու համար անհրաժեշտ կլինի կազմակերպությունների ցանկից ընտրել կազմակերպություն(ներ)ը և համապատասխան կոճակը սեղմելով կազմակերպության հեռացման հայտ ուղարկել նախարարություն: Հայտն ստանալուց հետո նախարարության աշխատակիցը կհաստատի կամ կմերժի հեռացման գործողությունը, որի արդյունքը կծանուցվի Օգտատիրոջը՝ ադմինիստրատիվ էջի *Ծանուցումների* բաժնի միջոցով, ինչպես նաև վերջինիս էլեկտրոնային հասցեին:

Կազմակերպությունը հեռացնելու դեպքում նրա վերաբերյալ ամբողջ տեղեկատվությունը կհեռացվի տվյալների բազայից, սակայն ադմինիստրատի արխիվ բաժնում նախորդ տվյալները կպահպանվեն մինչև ադմինիստրատորի կողմից վերջնական հեռացումը:

Հաշվետվություններ

Այս բաժնի միջոցով Օգտատերերը կկարողանան խմբագրել նախկինում ավելացրած հաշվետվությունները՝ միայն նախարարության կողմից համապատասխան թույլտվության դեպքում (չորս աչքի սկզբունք): Ներկայացված հաշվետվությունները հասանելի կլինեն նաև ներբեռնելու և/կամ տպելու համար:

Հաշվետվությունները խմբավորված կլինեն ըստ կազմակերպությունների, իսկ յուրաքանչյուր կազմակերպության համար ըստ տարիների: Ընտրված յուրաքանչյուր տարվա համար կբացվի նոր էջ, որտեղ խմբավորված կլինեն տվյալ տարվա ամսեկան և կիսամյակային/տարեկան (առանձնացնելով հաշվետվությունները ըստ ամիսների) հաշվետվությունները:

Հաշվետվությունները մուտքագրելիս հնարավոր կլինի դրանք դիտել և անհրաժեշտության դեպքում խմբագրել մինչև վերջնական հաստատելը, իսկ արդեն հաստատված հաշվետվությունները հնարավոր կլինեն խմբագրել մինչև հաջորդ հաշվետվությունն ավելացնելը՝ միայն նախարարության կողմից համապատասխան թույլտվության դեպքում:

Համակարգը նաև մուտքագրված տվյալները ստուգելու հնարավորություն կունենա: Սխալ կամ կիսատ լրացված դաշտերը կընդգծվեն, որպեսզի փոփոխվեն կամ լրացվեն մինչև վերջնական հաստատումը, իսկ այն դաշտերը, որոնց արժեքները նախորդ ամիսների համեմատ զգալիորեն նվազած/աճած կլինեն, համակարգը կընդգծի՝ արժանացնելով Օգտատիրոջ ուշադրությանը:

Համակարգը հնարավորություն կտա առանձնացնելու համակարգում

		գրանցված հաշվետվություն ներկայացրած և չներկայացրած կազմակերպությունները: Հաշվետվություն չներկայացրած կազմակերպություններին հնարավորություն կունենան ևս մեկ անգամ ծանուցվելու: Հաշվետվությունների բոլոր այն դաշտերը, որոնք պետք է հաշվարկվեն այլ դաշտերում լրացված տվյալների հիման վրա, ավտոմատ կերպով կհաշվարկվեն համակարգի կողմից և կցուցադրվեն էջի վրա մինչև վերջնական հաստատում կատարելը: **Տարեկան հաշվետվությունները** կձևավորվեն ծրագրի շնորհիվ ավտոմատ կերպով՝ հիմնվելով մուտքագրված ամսեկան հաշվետվությունների վրա: Տարեկան հաշվետվությունները կազմվելուց հետո կուղարկվեն կազմակերպություններին կամ դրանք համակարգող Օգտատիրոջը վերանայման և վերջնական հաստատման համար: Կազմակերպության կողմից հաստատում ստանալուց հետո միայն հաշվետվությունները կհրապարակվեն համակարգում: **Ծանուցումներ** Այս բաժնում Օգտատերերը հնարավորություն կունենան տեսնելու համակարգի կողմից արված ծանուցումները: Օգտատերերը կստանան նաև էլեկտրոնային փոստով հաղորդագրություններ ծանուցումներ ունենալու վերաբերյալ: Յուրաքանչյուր ամսվա առաջին աշխատանքային օրը համակարգը ծանուցում կուղարկի բոլոր Օգտատերերի էլեկտրոնային փոստերին հաշվետվությունները նշված ժամկետներում ներկայացնելու համար: Հաշվետվությունները սահմանված ժամկետում չներկայացնելու դեպքում նույնպես համակարգը ծանուցում կուղարկի տվյալ Օգտատիրոջը: Առաջին անգամ համակարգ մուտք գործելիս Օգտատերը ծանուցում կստանա այն մասին, թե ի՞նչ լրացուցիչ տվյալներ է պետք լրացնել: Լրացուցիչ տվյալների մուտքագրման համար կտրամադրվի համապատասխան ձև (form), որը կնշվի կարմիր գույնով և Օգտատերը կծանուցվի յուրաքանչյուր հաջորդ մուտքի ժամանակ: Առաջին անգամ համակարգ մուտք գործող Օգտատերերին նաև կտեղեկացվի Նախարարության կողմից տրամադրվող հարկային արտոնությունների մասին, ինչպես նաև կնշվի համապատասխան «Հավաստագիր» բաժին անցում կատարելու մասին տեղեկատվություն: **Օգտատեր** Այս բաժնի միջոցով Օգտատերերը հնարավորություն ստանալ Օգնություն համակարգն օգտագործելու վերաբերյալ: Համակարգը հնարավորություն կտա ստանալ կազմակերպությունների ցանկը ըստ ընտրված ֆիլտրերի, մասնավորապես՝ – ըստ գրանցման ժամանակաշրջանի – ըստ գործունեության ոլորտի – ըստ գործունեության վայրի – ըստ գրանցման ամսաթվի – ըստ տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչների – այլ Որոնման արդյունքները հնարավոր կլինի տեսնել աղյուսակի տեսքով, ինչպես նաև ներբեռնել դրանք համակարգչի մեջ կամ տպել: Էջի վրա որոնման արդյունքում ցուցադրվող յուրաքանչյուր կազմակերպության համար կլինի հղում, որը կբացի տվյալ կազմակերպության էջը՝ նրա մասին առավել մանրամասն տեղեկություններով: **Օգտատեր/Ադմինիստրատոր** Համակարգը կունենա նաև հատուկ արտոնությամբ օժտված ադմինիտրատոր, ով կկարողանա ավելացնել կամ հեռացնել Օգտատերերին:

		Այս ֆունկցիոնալությունը հասանելի կլինի միայն արտոնված Օգտատիրոջը: Կայքը պետք է նշված տվյալների հիման վրա գրաֆիկներ կառուցելու հնարավորություն ունենա: Ինչպես նաև, պետք է լինի հնարավորություն կազմված հաշվետվությունները, անհրաժեշտ փաստաթղթերը և նորությունները կայքի վրա տեղադրելու համար: **2.3. Կայքի քարտեզ** Նախատեսվում է տեղադրել կայքի քարտեզ, որտեղ կցուցադրվեն բոլոր բաժինները և ենթաբաժինները: Հիմնական նպատակն է կայքը դարձնել ավելի ընթեռնելի որոնողական համակարգերի համար: 3. Հարակից Պահանջներ **3.1. Տեխնիկական պահանջներ** • Բովանդակության ղեկավարման համակարգը պետք է լինի պարզ և հեշտ ղեկավարվող: • Կայքը պետք է օպտիմալացված լինի որոնողական համակարգերի համար (SEO): • Յուրաքանչյուր օր պետք է ավտոմատ իրականացվի կայքի արխիվացում (back-up): • Վեբ-կայքը պետք է միացված լինի Google Analytics այցելությունների և հաճախելիության գրանցման համակարգին: • Տվյալների բազան պետք է համալրվի օգտագործելով արդեն գոյություն ունեցող տվյալների բազան: • Յուրաքանչյուր թարմացումից հետո պետք է կատարել ֆունկցիոնալ և համատեղելիության թեստավորում • Թեստավորման գործընթացի մասին պետք է կազմվի համապատասխան ակտ և տրամադրվի պատվիրատուին • Կայքի առանձին էջում պետք է լինի աղյուսակ՝ խոշոր ընկերությունների, նրանց գործունեության ոլորտի և նրանց կողմից առաջարկվող ապրանքների և ծառայությունների մասին **3.2. Կայքի սպասարկում** b. Կայքի սպասարկումը պետք է իր մեջ ներառի՝ • ընթացիկ խնդիրների հայտնաբերում և լուծում, • ֆունկցիոնալության ոչ զգալի փոփոխություն և ավելացում (գործիքակազմ, հաշվետվական ձևեր, և այլն) • կայքի անխափան աշխատանքի ապահովում, • կայքում անհրաժեշտ թարմացումների կատարում և վերահսկում, • կայքում թարմացումներից հետո կայքի ամբողջական ստուգում, • կայքի անվտանգության բարելավում, • կայքի ստուգման ավտոմատ լուծումների օգտագործում և արդյունքների տրամադրում պատվիրատուին, • Կայքի փոփոխությունների կատարում ըստ 1093-Ն, 1551-Ն և 192-Ն որոշումների: **3.3. Անվտանգություն** • Օգտատերերի տվյալների անվտանգությունը համակարգ մուտք գործելու պահին կիրականացվի նույնականացման քարտով մուտք գործելու համար կիրառվող անվտանգության միջոցներով: • Հաշվետվություններ ու այլ տվյալներ Օգտատերերի համակարգչից սերվեր փոխանցվելու ընթացքում անվտանգության պահպանման նպատակով կներդրվեն ծրագրային լուծումներ, որոնք կկանխեն փոխանցվող տվյալների արտաքին ներգործությամբ փոփոխումը կամ չարտոնված անձանց կողմից ստանալը/դիտվելը: • Օգտագործվող և տվյալների բազայում պահվող բոլոր գաղտնաբառերն ու գաղտնի տվյալները կկոդավորվեն տվյալների

		փոխանցման ժամանակ: • Ծրագրային ֆայլերը պաշտպանված կլինեն այլ անձանց կողմից փոփոխվելուց: • Սերվերի վրա պետք է տեղադրված լինի հակավիրուսային ծրագրեր (պետք է ապահովվի Պատվիրատուի կողմից): • Սերվերը պետք է ապահոված լինի SSL սերտիֆիկատով (պետք է ապահովվի Պատվիրատուի կողմից): • Սերվերի վրա տեղադրված ծրագրային միջոցները և Օպերացիոն Համակարգը պետք է ժամանակին թարմացվի (պետք է ապահովվի Պատվիրատուի կողմից): • Որոշակի ժամանակ համակարգը չօգտագործելու դեպքում Օգտատերն ավտոմատ կերպով կլքի համակարգը (logout): **3.4. Համակարգային պահանջներ** Կայքը պետք է հարմարեցված լինի Chrome, Mozilla Firefox, Internet Explorer, Safari և այլ հայտնի զննարկիչներով դիտելու համար: Կայքը պետք է լինի նաև ճկուն՝ բջջային սարքերով դիտելու համար: Առայժմ կայքն իր ամբողջ ֆունկցիոնալությամբ հասանելի է միայն Windows Օպերացիոն Համակարգի համար, քանի որ նույնականացման քարտը սպասարկող ծրագրային ապահովումը հասանելի է միայն այս համակարգի համար: Հետագայում, ըստ անհրաժեշտության այն պետք է ընդլայնել նաև բջջային սարքերի և այլ Օպերացիոն Համակարգերի միջոցով օգտագործման համար: Վերոհիշյալ սահմանափակումը տվյալ նախագծի շրջանակներում հնարավոր է շրջանցել միայն համակարգ մուտք գործելու համար նույնականացման այլ տարբերակ մշակելու դեպքում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն
Ք. Երևան Վ.Սարգսյան 3/3
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011014710
ՀՎՀՀ 02565518
գլխավոր քարտուղար
Շ. Մեժլումյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Վեբէքս Թեքնոլոջիս» ՍՊԸ
ք. Երևան,Արտաշիսյան 44/5, բն. 28
«Ակբա Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
Հ/Հ 220001921521000
ՀՎՀՀ 02242681
տնօրեն
Հ.Առաքելյան

/ստորագրություն/
Կ.Տ